ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 21.08.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/164

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

«Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ի տնօրեն

Է. Փոթոյանի (պետական գրանցման վկայական թիվ 273.110.1125342),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 24.07.2020թ. թիվ 26/26-1/11116-2020 գրությամբ «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 22.07.2020թ. թիվ 01/10-89 գրության հիման վրա, 24.07.2020թ. թիվ 26/26-1/11116-2020 գրությամբ նախաձեռնել է «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 31.07.2020թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ն ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Վ.Ա. Ֆանարջյանի Անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն հայտարարել է «ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/65» ծածկագրով դեղորայքի մատակարարման բաց մրցույթ, որին մասնակցել է նաև «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ն և համաձայն 15.06.2020թ-ի թիվ 4 արձանագրության՝ 1-ին, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված մասնակից:

Գնման գործընթացը իրականացվել է Գնումների մասին ՀՀ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

Սույն թվականի հունիսի 30-ին պատվիրատուն ներկայացրել է պայմանագրի նախագիծը և պայմանագիր կնքելու առաջարկը՝

Մեջբերում.

«Կատարելով Գնումների մասին ՀՀ Օրենքի 36 հոդվածի պանջները հայտնում ենք Ձեզ, որ Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/65» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում սույն ծանուցմանը կից պայմանագրի նախագծում նշված չափաբաժինների մասով հաղթող է ճանաչվել Ձեր կազմակերպությունը:

Ելնելով վերոգրյալից Ձեզ ենք ներկայացնում պայմանագրի նախագիծը և հայտնում ենք, որ հարկավոր է պայմանագիրը կնքել և կից գրությամբ ներկայացնել «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ»:

Էլեկտրոնային փոստի միջոցով մեզ առաջարկվել է կնքել միայն պայմանագիր:

Կից ներկայացնում ենք պայմանագիր կնքելու առաջարկը:

Պատվիրատուն ոչ 30.06.2020թ-ին, ոչ էլ բողոքի առարկա դարձած թիվ 5 արձանագրության հրապարակման պահին իրավունք չուներ ուղարկելու մեզ համաձայնագրի նախագիծ, քանի դեռ սահմանված կարգով չի կատարել փոփոխություն իր գնումների պլանում:

Փաստենք, որ սահմանված ժամկետում մեր կողմից կնքվել է պայմանագիրը և ներկայացվել պատվիրատուին:

22.07.2020թ-ին Պատվիրատուն իր թիվ 5 արձանագրությունով ապօրինաբար զրկել է մեր կազմակերպությանը 1-ին, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով պայմանագիր կնքելու իրավունքից:

ա. Նախ, Պատվիրատուն մեզ չի ծանուցել համաձայնագիր կնքելու վերաբերյալ, ինչը ապացուցվում է կցված փաստաթղթով /ծանուցում պայմանագիր կնքելու վերաբերյալ/:

բ. Երկրորդ, համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի թիվ 526-Ն որոշման 18-րդ կետի՝ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գնում կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց գնման ընդհանուր գումարի նշման՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո գնման պլանում համապատասխան լրացում կատարելու պայմանով: Ընդ որում, համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն սահմանված կարգով փոփոխություն է կատարում գնումների պլանում, իսկ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման նպատակով համաձայնագիր կնքելու ծանուցումը և կնքվելիք համաձայնագրի նախագիծը պայմանագիրը կնքած անձին է ուղարկում գնումների պլանում փոփոխությունը կատարվելու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Քանի որ պատվիրատուն սահմանված կարգով փոփոխություն չի կատարել իր գնումների պլանում, հետևաբար իրավունք չունի ուղարկելու մեզ համաձայնագրի նախագիծ:

Կից ներկայացնում ենք պատվիրատուի գնումների պանը, որտեղ հստակ երևում է, որ 1-ին, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով դեռևս ֆինանսական միջոցներ նախատեսված չեն, հետևաբար անգամ խոսք գնալ չէր կարող համաձայնագիր կնքելու վերաբերյալ:

Փաստորեն Պատվիրատուի գործողությունները հակաօրինական են»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է, հաշվի առնելով վերը նշված փաստերը, «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունքի չունեցող մասնակիցների ցուցակում:

«Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ի տնօրենը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/164 ընթացակարգի շրջանակներում 31.07.2020թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, մասնակցել է նիստին և պնդել վերը նշված գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>«Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն ՀՀ ֆինանսների նախարարության ուղղված 22.07.2020թ. թիվ 01/10-89 գրությամբ հայտնել է հետևյալը.

««Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի 2020թ. կարիքների համար կազմակերպվել է ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/65 ծածկագրով դեղորայքի ձեռքբերման գնման ընթացակարգ: 15.06.2020թ. թիվ 4 արձանագրությամբ՝ 1-ին, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ն, նույն օրը Տեղեկագրում հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը, որտեղ անգործության ժամկետը սահմանվել է 10 օրացույցային օր: Անգործության ժամկետի ավարտից հետո՝ 30.06.2020թ. Պատվիրատուն պայմանագիր կնքելու վերաբերյալ ծանուցում է ուղարկել Ընկերությանը՝ կցելով պայմանագրի և ֆինանսական միջոցներ նախատեսվելու վերաբերյալ համաձայնագրի նախագծերը, ինչպես նաև բանկային երաշխիքի տեսքով՝ պայմանագրի և որակավորման ապահովումների օրինակելի ձևերը: Պայմանագրի և որակավորման ապահովումների բանկային երաշխիքի տեսքով ներկայացնելը պայմանավորված է այն հանգամանքով, որ պայմանագրի գինը և պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցները գերազանցում են գնումների բազային միավորի տասնապատիկը, այն է՝ 17 530 000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ:

Կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ Պայմանագրի և որակավորման ապահովումների բանկային երաշխիքի տեսքով անհրաժեշտ էր ներկայացնել ֆինանսական միջոցներ նախատեսվելու վերաբերյալ համաձայնագիրը Ընկերությանը ուղարկելու օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում, այսինքն՝ մինչև 21.07.2020թ.: Սակայն պայմանագրի և որակավորման ապահովումները բանկային երաշխիքի տեսքով նշված ժամանակահատվածում չի ներկայացվել Պատվիրատուին:

Ելնելով վերոգրյալից «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ն զրկվում է 1-ին, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով պայմանագիր ստորագրելու իրավունքից»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/164 ընթացակարգի քննության շրջանակներում 31.07.2020թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2020/164 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2020/164 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՈւԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/65» ծածկագրով բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք) հրապարակվել են ***20.05.2020թ.***:

2. «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՈւԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/65» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ձեռք բերվող գնման առարկայի մասով հաստատված գնումների պլանը (գնման առարկան ներառված առանց գնման ընդհանուր գումարի նշման) տեղեկագրում հրապարակվել է ***18.05.2020թ.***:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 24.07.2020թ. թիվ 26/26-1/11116-2020 գրությունը, «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ի 31.07.2020թ. գրությունը, «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի 22.07.2020թ. թիվ 01/10-89 գրությունը՝ կից փաստաթղթերով, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. ***որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,***

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը սահմանում է, որ **տեղեկագիրը** նույն օրենքով նախատեսված հրատարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքն է:

Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **գնումների պլանը, ներառյալ՝ փոփոխությունները**, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն **հրապարակում է տեղեկագրում**, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ***մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում:*** Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում:

Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 18-րդ կետի համաձայն՝ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գնում կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց գնման ընդհանուր գումարի նշման՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո գնման պլանում համապատասխան լրացում կատարելու պայմանով: Ընդ որում, համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն սահմանված կարգով փոփոխություն է կատարում գնումների պլանում, իսկ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման նպատակով համաձայնագիր կնքելու ծանուցումը և կնքվելիք համաձայնագրի նախագիծը պայմանագիրը կնքած անձին է ուղարկում գնումների պլանում փոփոխությունը կատարվելու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 32-րդ կետի 10-րդ ենթակետի համաձայն՝ եթե գնման ընթացակարգը կազմակերպվել է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, և պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման պահին նախատեսված չեն ֆինանսական միջոցներ, ապա որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացվում են միակողմանի

հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով: Եթե պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման պահին՝

ա. նախատեսված ֆինանսական միջոցները գերազանցում են գնումների բազային միավորի տասնապատիկը, սակայն պայմանագրի ամբողջական կատարման համար հետագայում ևս պահանջվում են ֆինանսական միջոցներ, ապա պայմանագրի ապահովումը, հատկացված ֆինանսական միջոցների մասով, ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի, իսկ պահանջվող ֆինանսական միջոցների մասով՝ միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով,

բ. նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա որակավորման ապահովումը հատկացված ֆինանսական միջոցների չափով ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով, իսկ հետագայում պահանջվող ֆինանսական միջոցների մասով ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով.

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 32-րդ կետի 12-րդ և 13-րդ ենթակետերի համաձայն՝

12) ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը.

13) ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Այսպես՝ «Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՈւԱԿ-

ԲՄԱՊՁԲ-20/65» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.06.2020թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ն Ընթացակարգի 1-ին, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված մասնակից և որոշվել է վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 22.07.2020թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ արձանագրել է, որ անգործության ժամկետի ավարտից հետո՝ 30.06.2020թ., Պատվիրատուն պայմանագիր կնքելու վերաբերյալ ծանուցում է ուղարկել Ընկերությանը՝ կցելով պայմանագրի և ֆինանսական միջոցներ նախատեսվելու վերաբերյալ համաձայնագրի նախագծերը, ինչպես նաև բանկային երաշխիքի տեսքով՝ պայմանագրի և որակավորման ապահովումների օրինակելի ձևերը:

Գնահատող հանձնաժողովը արձանագրել է նաև, որ Կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագրի և որակավորման ապահովումները բանկային երաշխիքի տեսքով անհրաժեշտ էր ներկայացնել, ֆինանսական միջոցներ նախատեսվելու վերաբերյալ համաձայնագիրը Մասնակցին ուղարկելու օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում, այսինքն՝ մինչև 21.07.2020թ., սակայն պայմանագրի և որակավորման ապահովումները բանկային երաշխիքի տեսքով նշված ժամանակահատվածում չի ներկայացվել Պատվիրատուին, հաշվի առնելով վերոգրյալը՝ «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ն զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ գործով առկա է Պատվիրատուի կողմից 17.08.2020թ. թիվ 01/10-114 գրությամբ տրամադրված ձեռք բերվող ապրանքների մասով հաստատված գնումների պլանը տեղեկագրում հրապարակված լինելը հավաստող կայքից արտատպված փաստաթուղթը, միաժամանակ արձանագրում եմ, որ նշված գրությամբ Պատվիրատուն հայտնել է հետևյալը.

««Վ.Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՈւԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/65» ծածկագրով բաց մրցույթի շրջանակում գնման առարկայի մասով 14.05.2020թ. հաստատված գնումների պլանը տեղեկագրում (procurement.am) հրապարակվել է 18.05.2020թ.:

Մրցույթը կազմակերպվել է առանց ֆինանսական միջոցների առկայության:

Անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակիցը ծանուցվել է ֆինանսական միջոցների առկայության մասին, առանց գնումների պլանի փոփոխության»:

ՈՒսումնասիրելով Պատվիրատուի 17.08.2020թ. թիվ 01/10-114 գրությունը, ինչպես նաև գործում առկա փաստաթղթերն արձանագրում եմ, որ «ՈւԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/65» ծածկագրով ընթացակարգը կազմակերպվել է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, այն է՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում:

Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **գնումների պլանը, ներառյալ՝ փոփոխությունները, *հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն հրապարակում* է տեղեկագրում**, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

Ընդ որում՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 18-րդ կետի համաձայն՝ ***Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գնում կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց գնման ընդհանուր գումարի նշման՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո գնման պլանում համապատասխան լրացում կատարելու պայմանով: Ընդ որում, համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն սահմանված կարգով փոփոխություն է կատարում գնումների պլանում,*** իսկ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման նպատակով համաձայնագիր կնքելու ծանուցումը և կնքվելիք համաձայնագրի նախագիծը պայմանագիրը կնքած անձին է ուղարկում գնումների պլանում փոփոխությունը կատարվելու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Այսպիսով՝ վերը նշված իրավակարգավորումներով հստակ սահմանվում են, որ ***համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն սահմանված կարգով փոփոխություն է կատարում գնումների պլանում***, մինչդեռ ուսումնասիրելով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունների հաջորդականությունը՝ արձանագրում եմ, որ Պատվիրատուն, «ՈւԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/65» ծածկագրով ընթացակարգը կազմակերպելով Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, և

այնուհետև ֆինանսական միջոցների առկայության պայմաններում, առանց գնումների պլանում համապատասխան փոփոխություն կատարելու, 30.06.2020թ. պայմանագիր կնքելու վերաբերյալ ծանուցում է ուղարկել Ընկերությանը՝ կցելով պայմանագրի և ֆինանսական միջոցներ նախատեսվելու վերաբերյալ համաձայնագրի նախագծերը, ինչպես նաև բանկային երաշխիքի տեսքով ներկայացվող պայմանագրի և որակավորման ապահովումների օրինակելի ձևերը, մինչդեռ գտնում եմ, որ Պատվիրատուն, մինչ Ընկերությանը ծանուցելը, Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի, Կարգի 18-րդ կետով սահմանված պահանջների համաձայն, ֆինանսական միջոցներ նախատեսվելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում գնումների պլանում պետք է կատարեր համապատասխան փոփոխություն (լրացում):

Հաշվի առնելով այն փաստական հանգամանքը, որ Ընթացակարգն իրականացվել է վերը նշված իրավակարգավորումների խախտմամբ, գտնում եմ, որ նման պայմաններում հնարավոր չէ արձանագրել «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված պարտավորության խախտման փաստը, ուստի գտնում եմ, որ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 24.07.2020թ. թիվ 26/26-1/11116-2020 գրությամբ «Աբամա Թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**